ԹԵՎԵՐ ԲՈԼՈՐԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎԱԾ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՊԱԳԱ ՏԱԹԵՎՈՒՄ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Վերջին շրջանում Արցախից բնակչության բռնի տեղահանումը հրատապ անհրաժեշտություն է առաջացրել կայուն աշխատանքի և համայնքային ինտեգրման ուղղությամբ: Շատերը կանգնած են անորոշության առջև՝ չունենալով բավարար հնարավորություններ իրենց ընտանիքներին աջակցելու համար: Այս իրավիճակի հետևանքով մոտ **27,000 մարդ արտագաղթել է Հայաստանից**, և նրանցից որոշների համար սա արդեն չորրորդ տեղահանումն է:
Միևնույն ժամանակ, Հայաստանում հյուրընկալող համայնքները, օրինակ՝ Տաթևի համայնքը, որոնք տեսականորեն կարող էին աջակցություն ցուցաբերել տեղահանված ընտանիքներին, նույնպես կանգնած են անվտանգության, սոցիալ-տնտեսական և հոգեբանական դժվարությունների առաջ: Դրանք հաճախ խոչընդոտում են տեղահանված ընտանիքների նկատմամբ ըմբռնումով մոտենալու կարողությանը:
Այս մարտահրավերներին ի պատասխան՝ **«Մենք ենք մեր սարերը»** զարգացման գործակալությունը նախաձեռնել է մի շարք առանցքային ծրագրեր, որոնք միտված են տնտեսական աճի և սոցիալական համախմբման խթանմանը: Դրանց թվում են՝ պտղատու այգու հիմնումը, ինչպես նաև Տաթևի համայնքում նոր տեղական շուկայի ստեղծումը:

Թևեր բոլորի համար

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը՝ համագործակցելով **Innobiz** ՀԿ-ի հետ, մշակել է համապարփակ ծրագիր՝ «Թևեր բոլորի համար» (Wings4All) անվամբ:
Ծրագիրը նպատակ ունի Արցախից տեղահանման և Սյունիքի մարզի տնտեսական դժվարությունները վերածել միասնության, զարգացման և առաջընթացի հնարավորությունների: Այն խթանում է ձեռնարկատիրական ոգին՝ զորացնելով թե՛ տեղահանված, թե՛ տեղական ընտանիքներին՝ օգտագործելով առկա ենթակառուցվածքները և պատանիների շարժիչ ուժը:
Նախորդ ծրագրերից ստացված փորձը ցույց է տալիս, որ երիտասարդները հաճախ հանդիսանում են նպատակասլացության, տոկունության, հաստատակամության և ապագայի հանդեպ հույսի աղբյուր: Այս ծրագիրը ընդգծում է ծնողների և պատանիների համագործակցության կարևորությունը՝ փոխադարձ աջակցությունը խթանելու նպատակով: Ընտանիքների՝ համատեղ ձեռնարկատիրական նպատակների շուրջ համախմբման արդյունքում ստեղծվում են փոխաջակցության և պատասխանատվության շղթաներ, որոնք բարելավում են նրանց կյանքի որակը՝ տանելով դեպի հաջողություն և կայունություն:
Այս ծրագրի շնորհիվ, հնարավորություն է տրվում 50 ընտանիքների՝ սովորել և կառավարել իրենց սեփական ձեռնարկությունները 6 ամսվա ընթացքում:

ԹԵՎԵՐ ԲՈԼՈՐԻՆ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋՆՈՐԴՎԱԾ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՊԱԳԱ ՏԱԹԵՒՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

1. **6 ամսյա Ձեռնարկատիրության և իրականացման ծրագիր՝** նախատեսված մեծահասակների և երիտասարդների համար:
2. **Կրթաթոշակներ** . այս փորձաշրջանի ընդացքում տրամադրված կլինի ամեն ընտաիքին 200 $ փորձարկելու իրենց գաղափարները:
3. **Գաղափարի ներկայացում և մրցույթ**. ծրագրի ավարտին ընտրված 5 ամենալավ նախագծերը կարժանան յուրաքանչյուրը՝ 5000 $ դրամաշնորհի:
4. **Արժեշղթաների մատչելիություն**. Ընտանիքներն ու պատանիները կստանձնեն առաջնորդող դերեր շուկայի օրվա գործառնությունների կառավարման մեջ:
5. **Երիտասարդների առաջնորդության զարգացում**. երիտասարդները կանցնեն առաջնորդության զարգացման բաղադրիչը և կխրախուսվեն մշակելու նորարարական նախաձեռնություններ:
6. **Տնտեսական հզորացում և աշխատատեղերի ստեղծում**. կկազմակերպվի 5 տեղացի վերապատրաստողի ուսուցում՝ ստեղծելու կայուն կրթական միջավայր:
7. **Համայնքային ինտեգրում**. կկազմակերպվեն համայնքային միջոցառումներ՝ տեղացի և տեղահանված ընտանիքների միջև կապեր և համագործակցություն խթանելու նպատակով:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

1. **50 մասնակիցներ** ձեռք կբերեն գործնական փորձ կարևոր բիզնես գործընթացներում, ինչը կհեշտացնի նրանց համար աշխատանք գտնելը կամ սեփական փոքր ձեռնարկությունների ստեղծումը
2. **50 երիտասարդ** կստանա մասնագիտացված վերապատրաստում առաջնորդության և ձեռնարկատիրական մտածողության ոլորտներում
3. **Մասնակիցների 75%-ը** կարձանագրի դրական փոփոխություն համայնքային հարաբերություններում
4. **Կկազմակերպվեն 4 համատեղ համայնքային միջոցառումներ** (օրինակ՝ տեղական շուկաներ, աշխատարաններ), որոնք կներգրավեն համայնքի առնվազն 70%-ի մասնակցությունը
5. **Մասնակիցների առնվազն 50%-ը** կհայտնի, որ հասել է կայուն եկամտի մակարդակի:

ԲՅՈՒՋԵ $ 91 900

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Հ. Հովնանյան ընտանիքի հիմնադրամը: Սկզբնական կարիքների գնահատման ընթացքում բացահայտված առաջնահերթ խնդիրներին առավել արդյունավետ արձագանքելու և ազդեցության ծավալը մեծացնելու նպատակով՝ **«Մենք ենք մեր սարերը»** զարգացման գործակալությունը ներկայումս իրականացնում է հավելյալ միջոցների հավաքագրում:Ստացված ռեսուրսները թույլ կտան մեզ տրամադրել մեկնարկային ֆինանսավորում ավելի մեծ թվով ընտանիքների:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրություն	**ՀՀ, Սյունիք, Տաթև համայնք**
Իրականացման ժամկետ	**2025թ. մարտ – 2025թ. նոյեմբեր**

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- **Ծրագրին մասնակցող խումբը կազմում է 50 ընտանիք Տաթև համայնքից, ներառյալ Արցախից տեղահանված քաղաքացիները**

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող ծրագիրը նպատակ ունի Տաթևի տարածաշրջանում ստեղծել երկարաժամկետ տնտեսական և սոցիալական փոփոխություն՝ հզորացնելով տեղահանված և տեղական ընտանիքներին ձեռնարկատիրական կարողություններով: Ծրագիրը կնպաստի Տաթևի տեղական շուկայի կայացմանը՝ որպես տնտեսական գործունեության կենտրոն, որը կապահովի ընտանիքների համար կայուն եկամտի հնարավորություններ և կնպաստի տարածաշրջանային զարգացմանը: Ընտանիքներն ակտիվորեն կներգրավվեն շուկայի կայունության պլանների մշակման գործընթացում: Օգտագործելով առկա ենթակառուցվածքները, խթանելով համագործակցային գործընկերություններ և կենտրոնանալով կարողությունների զարգացման վրա՝ նախաձեռնությունն ուղղված է ստեղծելու ինքնաբավ կառույց, որը շահավետ կլինի թե՛ տեղահանված, թե՛ տեղական ընտանիքների համար: